«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ, ՇԵՄԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Դաստիարակ՝ Արաքս Խուրշուդյան
Մանկապարտեզ՝ «Ծիծեռնակ» մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ——————————————————————3

ԳԼՈՒԽ 1 ԱԶԳԱՅԻՆ ԾԵՍԵՐԻ ԵՎ ՏՈՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1 ԾԵՍ, ԾԻՍԱԿԱՐԳ ——————————————————————5

1.2 ԱՄԱՆՈՐ ——————————————————————7

1.3 ԱԶԳԱՅԻՆ ԾԵՍԵՐԻ, ՏՈՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ——————11

ԳԼՈՒԽ 2 ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ——————————————12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ——————————————————————16

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ——————————————17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Որևէ երկրի պատմությանը կամ մշակույթին ծանոթանալու համար բավական է ծանոթանալ տվյալ երկրի ազգային տոներին և ծեսերին:

Հայ ազգի մշակույթը, ազգային արժեքները չէին պահպանվի, եթե այդ տոները, ծեսերը, սուրբ մասունքի պես չպահպանվեր և չփոխանցվեր սերնդեսերունդ:

Երեխան պետք է մեծանա այն միջավայրում, որտեղ շատ է խոսվում ազգայինի, ավանդականի մասին, պետք է տեսնի ինչպես են ընտանիքում նշում այս կամ այն ազգային տոնը, ինչպես են ուրախանում, ինչ խորհուրդ ունի իր մեջ, այսինքն երեխան պետք է կրթվի, դաստիարակվի այդ միջավայրում:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ երեխան պետք է նախադպրոցական տարիքում ծանոթանալով ազգային տոներին, ծեսերին, հետագայում այն սիրով կիրառի, մասնակցի նմանատիպ տոներին, ծեսերին և որ ամենակարևորն է տարբերակի ազգայինը օտարամուծությունից: Եթե ընտանիքում չի պահպանվում ավանդականը, ազգայինը, ապա այդ գործն իր վրա է վերցնում պետությունը՝ մանկապարտեզը, դպրոցը: Մանկավարժն իր առաջ նպատակ է դնում բացահայտել երեխաների ժողովրդական, քաղաքացիական, մշակութային կարողունակությունները՝հետագա աշխատանքը ճիշտ պլնավորելու համար:

Հետազոտության **նպատակն է** բացահայտել ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում: Նպատակ է հանդիսանում նաև սաներին մասնակից դարձնել ժողովրդական տոների կազմակերպմանը, հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգության առավել նշանակալից երևույթներին, ուսստի կարևորում եմ այդ տոների ծանոթությունն ու այդ առիթով ստեղծված ժողովրդական ստեղծագործությունների օգագործումը հանդեսներում, որպես խաղ, երգ, արտասանություն արարողություն:

Հետազոտության խնդիրներն են

1. Ուսումնասիրել ազգային ծեսերը և տոներ:

2. Բացահայտել նախադպրոցական ուսումնական հաստատություններում ազգային տոների անցկացման անհրաժեշտությունը:

3. Փորձարարությամբ ապացուցել երեխաների մշակութային, ճանաչողական, ժողովրդական, քաղաքացիական կարողունակությունեի զարգացման ուղենիշերը՝ ազգային ծեսերի և տոների անցկացման միջոցով:

Թեման օգտակար է ազգայինը, ավանդականը պահպանելու, երեխաների մոտ մշակութային, ճանաչողական, ժողովրդական, քաղաքացիական կարողունակություններ

զարգացնելու համար: Ակնկալվում է, որ երեխան վերջնարդյունքում պետք է ճանաչի ազգային տոները և ծեսերը:

Աշխատանքը լիովին համապատասխանում է նոր չափորոշիչներին: Կապը նախադպրոցական կրթական չափորոշչի հետ՝ԻԾԱ, ԽԶ:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը. Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից և 4 անուն գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը համակարգչային շարվածքով կազմում է 16 էջ:

ԳԼՈՒԽ 1 ԱԶԳԱՅԻՆ ԾԵՍԵՐԻ ԵՎ ՏՈՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1 Ծես, ծիսակարգ

Ծեսն ավանդական կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն է: Այն լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում, մարդկային հարաբերություններում և այլուր: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի հասարակության միասնականությունն ու հարատևությունը:

Ծես նշանակում է նվիրում, ընտելացում տվյալ կրոնին և արժեքների համակարգին, ազգությանը, պետությանը: Ծեսերի շնորհիվ պահպանվել և դարեդար փոխանցվել են ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել էթնոսին բնորոշ առանձնահատկությունները:

Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է: Այն ներառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն, հանրությանը կյանքի և գործունեության կարևոր պահերին:

Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը: Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանային ն, խորհրդանշական և չունեն նպատակային գործնական բնույթ: մարդաբան Մ.Դուգլեսը ծեսը սահմանում է որպես գործողությունների տիպեր, որոնք ծառայում են հավատքի արտահայտման համար կամ էլ որոշակի խորհրդանշական համակարգերին պատկանելու ձևեր են:

«Ծես» հասկացության տակ սովորաբար ենթադրվում է ստանդարտ, հաստատուն գործունեության հետևողականությունը, որն ունի արարողական բնույթ:

Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող լրադարձությունների կապակցությամբ: Ըստ Ա.Սարգյանի ծիսակարգը խիստ կանոնակարգված, անփոփոխ միակերպ և հիմնականում կապվում է կրոնական պատկերացումների հետ, ունի զանգվածային բնույթ, այսինքն դրան մասնակցում են մարդկանց մեծ խմբեր:[1]

Աշխարհում շատ ու շատ ժողովուրդներ կրոնական, քաղաքական, գաղափարախոսական համակարգերի փոփոխություններից հետո իրենց ծեսերն այնուամենայնիվ շարունակում են կատարել:

1. Հրանուշ Խառատյան-Առաքելյան, Հայ ժողովրդական տոները/երկրորդ լրամշակված հրատարակություն/

Ժողովրդական ծեսը ծրագրված ելույթ չէ, այն ժողովրդի հավաքական և տևական ստեղծագործության արդյունք է:

Հայկական ծեսերը շատ հարուստ երգեր ու պարեր ունեն: Երգերի բովանդակությունը միշտ համապատասխանում է տվյալ ծեսի իմաստին, իսկ ծեսերին բնորոշ ուտելիքները, տոնական հագուստը, նվերներն ունեն իրենց առանձնահատկությունները: Դրանք բոլոր տոներում առկա են, ոչ մեկն ինքնանպատակ չէ: Այսպիսով, հանդես գալով որպես հասարակական կյանքի հոգևոր ոլորտ՝ ծեսերը, սովորույթները, անգնահատելի դեր ունեն՝ յուրովի լրացնելով ավանդույթի ընդհանուր կառույցի առանձին կողմերը, որի շնորհիվ ավանդույթը դառնում է միասնական և ներդաշնակ մի ամբողջություն: Դրանցում ժողովուրդը հանդես է գալիս և որպես ստեղծագործ, և որպես գործիչ, և որպես քննադատ:[2]

2 Աբեղյան Մ. Ժողովրդական խաղիկներ, Երևան 1940թ

1.2 ԱՄԱՆՈՐ

Յուրաքանչյուր տոն տվյալ ժողովրդի կենսագրության մի էջն է, պատմության մասնիկը, խառնվածքի ինքնուրույն դրսևորումը: Վաղնջական տոները բանավոր ամենամեծ ստեղծագործություններն են, որ փոխանցվում են սերնդեսերունդ, դարից դար:

Հայկ Խաչատրյան

Ըստ պատմական տվյալների, վաղ ժամանակներում հայերը Նոր տարին նշել են մարտի 21-ին՝ գարնանային գիշերահավասարի օրը: Բնությունը հարություն է առնում գարնան սկզբին, և հայ մարդը այս օրն էլ դարձրել է Նոր տարի և նշել շքեղ տոնախմբությամբ՝ փառաբանելով բնության զարթոնքը, ակնկալելով բերքառատ տարի: Հայկական երկրորդ տարեգլուխը եղել է Նավասարդի 1-ը՝ օգոստոսի 11-ը, և տևել է մինչև սեպտեմբերի 9-ը: Ըստ ավանդության, Հայկ նահապետը Հայոց ձոր գավառում սպանել է բռնակալ Բելին՝ազատություն պարգևելով իր տոհմին ու հետնորդներին: Ենթադրաբար դա տեղի է ունեցել մ.թ.ա. 2492թ-ի օգոստոսի 11-ին: Օգոստոսյան տոնը հայերը կոչել են Նավասարդ: Բառը կազմված է նավա /նոր և սարդ/ տարի բառերից և նշանակում է նոր տարի: 18-րդ դարում, Սիմեոն Երևանցի/համապատասխանեցնելով քրիստոնեական մի շարք երկրներում ընդունված տարեսկզբի հետ/: Միայն 20-րդ դարի սկզբներից համընդհանուր դարձավ հունվարի 1-ը, որպես տարվա սկիզբ, տոնելը: Հիշատակվում են տոնի տարբեր անուններ՝ Ամանոր, Տարեմուտ, Տարին Գլուխ, Նոր տարի, Կաղանդ, Կաղինդ, Կալոնտար, Կալանտար: Նոր տարուն նախորդող գիշերն էլ հայտնի էր Լոլեյի գիշեր, Կլվլիկ, Կաղ կամ Կախ անուններով, իսկ համշենահայերի մոտ՝ Ծաղկըմուտ: Նոր տարին սկսվում էր դեկտեմբերի 30-31-ին՝ ամանորյա խմորեղեն պատրաստելով: Խմորեղենի մեջ ամենագլխավորը «Տարի հաց», «Կրկենի», «Դովլաթ կրկենի», «Կլոճ», «Փուռնիկ» և այլն անուններով ծիսական հացն էր: Տարբեր տեղերում այդ հացի բաղադրատոմսերը, ձևը տարբեր էր: Այն կարող էր լինել գաթա, բաղաջ, ձվաձև, կլոր, խաչաձև, եռանկյունի, քառակուսի և այլն: Կարող էր զարդարված լինել զանազան զարդանախշերով, ընկույզով, չամիչով, սերմերով, պտուղներով: Գլխավորն այն է, որ հացի մեջ որևէ նշան է դրվում՝ կորիզ, լոբի կամ ուլունք, ավելի հաճախ՝ դրամ: Տարի հացը տարբեր տեղերում տարբեր օր են կտրում՝ տարեմուտի ընթրիքին, հունվարի 1-ի առավոտյան, հունվարի 4-ին, հունվարի 5-ին՝ ճրագալույծին, հունվարի 6-ին՝ ծննդին: Ըստ մատենագիտական նյութերի, հնում «Տարի» հացը բաժանել են 12 մասի՝ իբրև 12 ամիսների խորհրդանշան: Բաժանել են նաև տան բոլոր անդամների թվին հավասար: Հաճախ բաժին են հանել նաև տան կենդանիներին, արտին, հանդին:[1]

2. Հրանուշ Խառատյան-Առաքելյան, Հայ ժողովրդական տոները/երկրորդ լրամշակված հրատարակություն/

Ում բաժին է ընկել նշանը, այդ տարի նա երջանիկ կլիներ կամ ընտանիքի հաջողությունը նրանց կգար: «Տարի» հացից բացի թխում էին զանազան ձևերի ու մեծության այլ խմորեղեններ, որոնք ունեին կանխատեսելու նպատակ, ինչպես նաև հմայական խմորեղեններ: Վերջիններից էին, օրինակ, կլոր, մեջը ծակ, ցորենով ու գարիով զարդարված «հացի հոր», «գարու հոր» կոչվող խմորեղենները: Թխում էին ընտանիքի եկամուտը խորհրդանշող աշխատանքային գործիքի պատկերով խմորեղեն՝ արոր, գութան, խնոցի, մկրատ, մատնոց, ուրագ և այլն, որևէ ցանկություն խորհրդանշող պատկեր՝ քսակ, պայտ, կողպեք, հասկ: Շատ տեղերում թխում էին մարդակերպ թխվածքներ, որոնք կոչվում էին «Ասիլ-Բասիլ», «Վասիլ»: Սրանք խորհրդանշում էին բնության մեռնող ու հարություն առնող աստվածներին՝ Նարին, Արա գեղեցիկին: Մարդակերպ հացիկների աչքերի, բերանի, կրծքին դրված ձեռքերի վրա չամիչներ էին դնում: Թխվելու ընթացքում դրանց ուռելը կամ սմքելը դրական կամ բացասական գուշակություն էր տվյալ տարվա համար:

Ձևավոր հացերով ոչ միայն գուշակություններ էին անում, այլև շնորհավորում էին միմյանց տոնը և դրանցով «կաղանդում» ջուրը: Նոր տարվա նախորդ գիշերը կանայք և երիտասարդ տղամարդիկ իջնում էին գյուղի աղբյուրը և կաղանդում՝ շաղ տալով նրա մեջ սերմեր, պտուղներ կամ թրջելով ծիսահացերը: Հավատում էին, որ ճիշտ կեսգիշերին ջրի տեղ աղբյուրից ոսկի է հոսում/ընդամենը մի պահ/ և աշխատում էին հենց այդ պահին աղբյուրից ջուր բերել: Թիֆլիսահայերը թխում էին 2 հաց, որոնք կոչվում էին «Էգ» և

«Չիք»: «Էգը» ողջ տարին պահում են ալյուրի մեջ, որ ալյուրը շատանա, իսկ «Չիքը» գցում էին հոսող ջուրը, որ չարիքն անցնող ջրի նման չքանա: Նոր տարվա նախորդ օրն ու գիշեր 10-12 տարեկան տղաների խմբերը շրջայց էին կատարում համագյուղացիներին: Նրանք երգելով տուն էին մտնում կամ երդիկից դատարկ տոպրակ իջեցնելով՝ ավետում էին տարվա ավարտը, Նոր տարվա գալուստը: Երգերի տեսքի միջոցով գովերգում էին ընտանիքի անդամներին, տունը, հղում էին բարեմաղթանքներ և թվում իրենց սպասելիքները տանտերերից: Երբեմն իրենց սպասելիքներն արտահայտում էին Գալանտոսի, Հարսի, Նորի անունից, որոնք Նոր տարվա ծիսական կերպարներն էին:

Սուրբ ծնունդը Քրիստոսի ծննդյան տոնն է և նշվում է աշխարհի բոլոր քրիստոնյա ժողովուրդների կողմից: Հայերի կողմից նույն օրը նշվող Մկրտության տոնը խորհրդանշում է Հորդանան գետում քրիստոսի մկրտությունը: Քրիստոնեության վաղշրջանում այս տոնը նշում էին հունվարի 6-ին՝ Քրիստոսի մկրտության տոնի հետ միասին: 4-րդ դարում Հռոմի եկեղեցին որոշում ընդունեց ծննդյան տոնը նշել դեկտեմբերի 25-ին, Մկրտությունը՝ հունվարի 6-ին, որից հետո բոլոր քրիստոնյա ժողովուրդները, բացի հայերից, Ծնունդն ու Մկրտությունը նշում են առանձին օրերին: Հայ ժողովրդի կենցաղում Ծննդյան տոնի հանդիսությունները պտտվում էին նախ և առաջ եկեղեցական ծիսակարգի շուրջ, որոնց միահյուսվել էին նաև մի շարք

ժողովրդական սովորույթներ: Ծննդյան ու Մկրտության տոնը ժողովրդին հայտնի է գլխավորապես որպես «Զրօրհներք», գործածական է նաև տոնի «փոքր Զատիկ» անվանումը: Ծննդյան տոնին նախորդող շաբաթը պաս էր: Այդ նույն շաբաթ խստորեն արգելված էր գիշերն աշխատել, «այլապես Քրիստոսը կբարկանար»:[2]

Հաստատված ավանդույթի համաձայն, հունվարի 1-ից մինչև հունվարի 6-ը օջախներում կրակն անմար էր մնում, ինչն այդ երկու տոներին հաղորդում էր որոշակի անընդհատություն:

Հունվարի 5-ին եկեղեցում տեղի էր ունենում ծննդյան ժամերգությունը, որին ներկա էին միայն տղամարդիկ:

Հունվարի 5-ի երեկոյան բոլոր հայ ընտանիքներում թաթախման երեկո էր, երբ, ժամերգությունից վերադառնալով, պասը բացում էին Ծննդյան տոնին ընդունված ճաշատեսակներով: Առհասարակ Ծննդյան տոնի բուն ժողովրդական հանդիսակարգը կենտրոնանում էր թաթախման երեկոյի ընթրիքի շուրջ: Ժամերգությունից տուն դարձողներն իրենց հետ տանում էին այնքան մոմ, որքան ընտանիքի անդամներն էին: Ընթրիքից առաջ տանը խունկ էին վառում: Ընտանիքի յուրաքանչյուր անդամի ափսեյի դիմաց վառում էին վերջինիս համար նախատսված մոմը և մոմերի լույսի ներքո հավաքվում սեղանի շուրջ: Այդ երեկո սեղանի զարդը ձկնեղենի զանազան տեսակներից պատրաստված կերակրատեսակներն էին, որոնց ուղեկցում էին առատ յուղով օծված բրնձի, ձավարի, արիշտայի փլավները, ալյուրից պատրստված և դոշաբով կամ մեղրով քաղցրեցված խաշիլը և այլն: Բավական տարածված էր սիսեռով և չորացված բանջարեղենով ապուրը, որը հայտնի էր մայրաճաշ, մայրամաբանջար կամ Մարիամի ծամեր անունով:

Ընտանիքը նոր էր բոլորած լինում ընթրիքի սեղանի շուրջ, երբ դուռը ծեծում էին: Տանտիկինը հասկանում էր, որ դողերոցք ունեղոց մեկն է, որը հիվանդությունը բուժելու նպատակով ուխտ է արել Ծննդյան ընթրիքին յոթ դռնից փայ հավաքել: Դժբախտին անկասկած գոհացնում էին: Ավելի ուշ սկսվում էին Քրիստոսի ծնունդն ավետող խմբերի այցելությունները: Սպիտակ շապիկներ հագած պատանիները շրջում էին տնետուն, երգերով ավետում Քրիստոսի ծնունդը՝ փոխարենը ստանալով յուղ, ձու, ընկույզ, այլ մթերքներ կամ մանր դրամ: «Ավետիս» երգերը շատ բազմազան էին, երգվում էին տեղական բարբառով, որոնցում դրսևորված էին Քրիստոսի ծննդյան և կյանքի վերաբերյալ ժողավրդական պատկերացումները, գովերգում էին Փրկչի առաքինությունները, հրաշագործությունները և այլն:

1 Աբեղյան Մ. Ժողովրդական խաղիկներ, Երևան 1940թ

Ծննդյան խորհրդավոր երեկոյի ու գիշերվա հետ կապված էին զանազան պատկերացումներ: Այդ գիշեր հոսող ջրերին վերագրվում էր հատուկ զորություն: Վստահ էին, որ Ծննդյան գիշերը հոսող ջրերը մի պահ կանգ են առնում, և եթե այդ պահին որևէ մեկը ինչ-որ իր ընկղմեր ջրի մեջ, այն անպայման ոսկի կդառնար: Գանձակում ամուլ կանայք երեք անգամ մտնում էին ջուր և դուրս գալիս այն հաստատ հավատով, որ Խննդյան գիշերվա ջուրն իրենց զավակ կպարգևեր: հունվարի 6-ին պատարագից հետո, կատարվում էր Հորդանան գետում Քրիստոսի մկրտությունը խորհրդանշող արարողությունը: Հավաքված հասարակության աչքի առաջ քահանան խաչը ջուրն էր գցում և մեռոն կաթեցնում ջրի մեջ: Ներկաներն անմիջապես օրհնված ջրի մեջ թաթախում էին իրենց ձեռքերը, քսում մարմնի հիվանդ մասերին՝ համոզմունքով, որ օրհնված ջուրը կբժշկի իրենց: Այդ ջրից սափորներով տանում էին տուն, կաթեցնում յուղի ու պանրի կարասները, ամբարների մեջ և այլն՝ դրանց առատությունն ապահովելու հույսով: Այդ ջրից պահում էին մինչև հաջորդ տարի և անհրաժեշտության դեպքում գործածում՝ խմեցնում հիվանդներին, խառնում Տյառնընդառաջի մոխրին՝ օգտագործելով կարկտի դեմ և այլն:

Խաչը ջուրը գցելու պահը ուղեկցվում էր հրացանների կրակոցներով, աղավնիներ թռցնելով, իսկ որոշ վայրերում այն վեր էր ածվում իսկական խողովրդական տոնախմբության, ընդհուպ մինչև ջիարշավներ և այլ մրցախաղեր կազմակերպելը:

1.3 ԱԶԳԱՅԻՆ ԾԵՍԵՐԻ, ՏՈՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մանկապարտեզներում ծեսը վաղուց ի վեր դարձել է կրթության կարևոր բաղկացուցիչ մաս՝ ներառելով տարբեր հմտությունների ու կարողությունների առերևույթ միգուցե չերևացող, բայց իրականում շատ խորքային հիմք: Չարենցավան քաղաքի «Ծիծեռնակ» մսուր մանկապարտեզում իրականացվում են բազմաթիվ ծեսեր՝ սուրբ ծննդյան, նոր տարվա, Ծաղկազարդի, Վարդավառի:

Սուրբ Ծննդյան ծեսը սկսում ենք նկարների նախնական դիտումով, երգերի, պարերգերի, ոտանավորների ուսուցմամբ Երեխաների կերպարվեստային գործունեության ժամանակ գեղեցիկ աշխատանքների կատարմամբ: Ինչպես նաև զարդարում ենք խմբասենյակը, ծիսական ծառը, երգում, բարեմաղթանքներ հղում միմյանց: Կտրում ենք նախօրոք միասին թխած տարեգաթան ու որոշում այդ տարվա հաջողակին: Խաղում ենք ընկույզախաղեր, գլորում, կոտրում և ուտում:

Ծաղկազարդը նախորդում է Զատիկին, որի ընթացքում սկսում ենք պատրաստվել ծեսին, դիմավորել Ուտիսին և Ակլատիզին: Խմբասենյակում ունենում ենք ծիսական ծառը, որը խորհրդանշում է անցյալը, ներկան ու ապագան: Ծեսի ընթացքում միասին գունավորում ենք ձվերը և թելերով կախում ծառի ճյուղերից: Տոնին մասնակցում են նաև ծնողները, տարբեր ձեռքի աշխատանքներով ցուցահանդես-մրցույթ կազմակերպում:

Մինչ այդ կազմակերպում ենք նաև ցորենացանը.սաները բերում են բամբակ, ցորեն: Եչեխաներն իրենց ձեռքով ցանում են ցորենը, ջրում են և անհամբեր սպասում են ածիկի աճելուն: Իսկական տոնախմբության է վերածվում այս ծես-նախագիծը՝ երեխաները զատկախաղերով, երգով, պարով, ասմունքելով շրջում են մանկապարտեզում տարբեր խմբերով:

ԳԼՈՒԽ 2 ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտական աշխատանքն անցկացրել եմ Չարենցավանի «ԾԻԾԵՌՆԱԿ» մսուր մանկապարտեզում, որտեղ ես ինքս տարիներ շարունակ աշխատում եմ որպես դաստիարակ: Ունենալով բազում տարիների աշխատանքային փորձ առաջին անգամը չէ, որ վերծանել եմ տվյալ թեման, քանի որ ես ինքս էլ որպես մանկավարժ, որպես հայ մարդ, գիտակցում եմ թեմայի արդիականությունը, անհրաժեշտությունը, այն էլ այս բարդ պատերազմական իրավիճակներում: Բոլոր տարիքային խմբերում աշխատելով հաճախակի եմ առնչվել այս թեմայի հետ: Կազմակերպել եմ բազում ցերեկույթներ նվիրված ազգային տոներին, երեխաների հետ խաղացել եմ ազգային շարժախաղեր: Կարող եմ փաստել մի բան, որ երեխաների մեջ ազգայինի հանդեպ սերը, ճանաչողական աշխատանքները պետք է սկսել ընտանիքից, ապա մանկապարտեզի կրտսեր խմբից:

Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել երեխաների գիտելիքները ազգային ծեսերի, տոների վերաբերյալ և ցերեկույթների, ազգային շարժախաղերի օգնությամբ զարգացնել մշակութային, ճանաչողական, ժողովրդական, քաղաքացիական կարողունակությունները:

Խնդիրներն են

1. Զրույցի, հարցերի միջոցով արձանագրել երեխաների գիտելիքները ազգային ծեսերի, տոների վերաբերյալ:

2. Կազմակերպել և անցկացնել տարբեր ցերեկույթներ, ազգային շարժախաղեր, որոնք կնպաստեն երեխների մշակութային, ճանաչողական, ժողովրդական, քաղաքացիական կարողունակությունների զարգացմանը:

3. Երեխաների գիտելիքները ստուգել կազմակերպելով կենտրոններով աշխատանք:

Պարապմունքի պլան կոնսպեկտ

Թեմա՝ «Նոր տարի»

Խումբ՝ կրտսեր երկրորդ՝ **3-4 տարեկան**

Տևողություն՝ 20 րոպե

Նպատակը՝ ձևավորել մեծահասակների և հասակակիցների հետ խոսքային հաղորդակցման պահանջմունք:

Հարստացնել երեխաների բառապաշարը նոր բառերով /ամանոր, տոնածառ, նոր տարի և այլ բառերով/:

Ուսուցման կազմակերպման ձևեր՝ ցուցադրում, խմբերով աշխատանք, անհատական աշխատանք:

Անհրաժեշտ պարագաներ՝ նոր տարվա նկարներ, տոնածառ, տոնաշառի խաղալիքներ:

Ընթացքը՝

Պարապմունքը սկսել հանելուկով.

Ամառ ձմեռ կանաչ հագած՝

Անտառում մի ծառ է կանգնած,

Տարեմուտին թե տուն բերես,

Կզարդարի տոնահանդես**: (Եղևնի)**

Խթանում՝ յուրաքանչյուր սեղանի վրա դնել նկարներ նոր տարվա թեմատիկայով առաջարկել դիտել նկարները և քննարկել հարցերի մոջոցով:

Հարցերի և հարցադրումների միջոցով պարզել սաների գիտելիքները և համալրել նոր գիտելիքներով: Երեխաներին տալ ժամանակ մտածելու համար ապա սել կարծիքներ հարցի վերաբերյալ:

Իմաստի ընկալում՝ երեխաներին տալ առաջադրանք սեղանին եղած նյութերը խմբավորել՝ առանձնացնելով նկարներ որոնք վերաբերվում են նոր տարվան (տոնածառ, տոնածառի խաղալիքներ, ամանորյա սեղան և այլն):

Խաղը ամփոփելու նպատակով յուրաքանչյուր սեղանի կատարած աշխատանքը ցույց տալ մնացած երեխաներին և խրախուսել երեխաներին կատարված աշխատանքի համար:

Կշռադատում՝ դաստիարակն առաջարկում է երեխաներին մոտենալ զորգի մոտ և զարդարել եղևնին, որպեսզի ամփոփի և գեղեցիկ եզրափակի պարապմունքը:

Վերջնարդյունք՝ կիրառի խոսքում պարզ ընդարձակ և համառոտ նախադասություններ, նկարագրի նկարի բովանդակությունը որոշակի ուղղորդմամբ, ճիշտ օգտագործի խոսքի տարբեր մասերը:

Կապը չափորոշչի հետ՝ ԽՀ ա, բ, ՀՍԱ ա, բ:

Դիտարկում՝ *պարապմունքը ճիշտ էր պլանավորված, վերջնարդյունքին հասնելու քայլերը ճիշտ էին ընտրված, դաստիարակը պարբերաբար խթանում էր սաների ուշադրությունը, հետաքրքրությունը:*

Պարապմունքը անցավ համապատասխան հուզական մթնոլորտում, ապահովված էր հետադարձ կապը յուրաքանչյուր սանի հետ:

Տնօրեն՝ Լ. Ազարյան

Դաստիարակը օգտագործեց բազմթիվ դիդակտիկ պարագաներ, նյութեր, ինչն էլ ավելի գրավիչ էր դարձնում պարապմունքը: Իսկապես մանկապարտեզն այն վայրն է, որտեղ պետք է անցկացնել բոլոր տոները:

Մեթոդիստ՝ Ռ. Օհանջանյան

Արձանագրող փուլ

Մինչև պարապմունքը երեխաների հետ անցկացրել եմ զրույց ազգային տոների, ծեսերի մասին: Զրույցից հասկացա, որ երեխաների գերակշռող մասը գաղափար չուներ այդ ամենի մասին, իսկ մյուս մասն էլ կարճ, մի քանի բառով կարողացան նկարագրել, թե ինչպես են նշում ընտանիքում այդ ծեսերը: Բայց տոնի բուն գաղփարը երեխաները չէին պատկերացնում: Պլանավորեցի միջոցառում, որտեղ երեխաներին հասանելի ձևով ցանկացա տեղեկացնել այս կամ այն ծեսի խորհուրդը, որ երեխան հասկանա, թե օրինակ՝ ինչպե են նոր տարվան նախապատրաստվում կամ ինչ խորհուրդ ունի այդ տոնը: Վերը նշվածից կարելի է փաստել, որ երեխաների մոտ կզարգանա ճամաչողական և մոտիվացիոն, ժողովրդական, քաղաքացիական,մշակույթային կարողունակությունները:

Ձևավորող փուլ

«Ամանորը» երեխաների ամենասիրելի տոներից մեկն է և բոլորն էլ մեծ որգևորությամբ են մասնակցում միջոցառումներին: Ամանորի ցերեկույթը սկսել ենք «Ձմռան շուրջպար» երգ-պարով: Այնուհետև ներս է մտնում Ձյունանուշը և հայտարարում, որ Ձմեռ պապը մոլորվել է անտառում և հեքիաթի հերոսները երեխաների հետ գնում են Ձմեռ պապին օգնության: Ապա խորամանկ աղվեսից ազատում են Ձմեռ պապուն, բերում մանկապարտեզ և միասին երգում, պարում ու ասմունքում: Վերջում վառում են տոնածառի լույսերը և երազանք պահում:

Երեխաների հետ խաղացել ենք նաև հետևյալ շարժախաղերը՝

«Ով արագ կզարդարի տոնածառը», «Բռնեք փաթիլը», «Դառնանք ձնագնդիներ»[3]:

Ստուգիչ փուլ

Յուրաքանչյուր հանդեսից հետո հարց ու պատասխանի, նկարների դիտումից երեխաների խոսքից եկա այն եզրակացության, որ երեխաների մոտ 80%-ը ճանաչում են ազգային տոները, ծեսերը, դրանց խորհուրդը: Այսինքն երեխան դառնալով այդ ամենի մասնակիցը, դարձավ նաև դրա սերնդե սերունդ փոխանցողը:

Հոգեբան՝ երեխաները դառնալով այս ամենի մասնակիցը, հասան շոշափելի արդյունքի, նրանց ոգևորությունը կրկնապակվեց, ինչը նպաստեց ոչ միայն հուզական զարգացմանը այլ նաև հույզերը դյուրորելուն և դրանց մասին խոսելուն:

Լ. Հովհաննիսյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այսպիսով, ուսումնասիրելով ազգային ծեսերը և տոները, եկա այն եզրահանգման, որ դրանք ունեն մեծ դաստիարակչական, կրթական, ուսուցողական նշանակություն: Հայ երեխային հայեցի կրթությունը և դաստիարակությունն այնքան են անհրաժեշտ, որքան մեսրոպյան այբուբենը՝ հայոց լեզուն իմանալու համար:

2. Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ազգային տոների անցկացման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ երեխաների մոտ զարգանում է աշխարհընկալումը, գեղագիտական ճաշակը, բանավոր և կապակցված խոսքը: Երեխան ունենում է տարրական պատկերացումներ ազգային սովորույթների, ընտանեկան հանդիսությունների, տաղավար տոների մասին և որ ամենակարևորն է երեխան մեծանում է հայրենասեր, քրիստոնեասեր:

3.Փորձարարությամբ ապացուցվեց, որ երեխաների մշակութային, ճանաչողական, ժողովրդական, քաղաքացիական կարողունակություններն էլ ավելի լավ զարգանում են այն ժամանակ, երբ ուսուցման համակարգի հենց առաջին օղակից՝ մանկապարտեզից, սկսվում է մանկան աշխարհաճանաչմանն ուղղված տարրական գիտելիքների յուրացումը: Երեխան սիստեմատիկ պարապմունքների, խաղերի, շարժախաղերի, միջոցառումների մասնակիցը դառնալով ձևավորվում է որպես անհատ, ով ունի մշակույթային, ճանաչողական, քաղաքացիական կարողունակություններ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հրանուշ Խառատյան-Առաքելյան, Հայ ժողովրդական տոները/երկրորդ լրամշակված հրատարակություն/
2. Աբեղյան Մ. Ժողովրդական խաղիկներ, Երևան 1940թ
3. Մխիթար Սեբաստացի Կրթահամալիր, «Ծուղրուղու» զարգացնող նյութերի ժողովածու, 2-6 տարեկանների համար:
4. Լալա Սմբատյան, «Տոնական Ղողանջներ» 2011թ, էջ36-60:
5. https://kznaknaxadprocakan.blogspot.com/